քաղաքականութիւնը, որ սովորական էր, այն է Հայաստանի սահմանակից գաւառներն ամբողջապէս աւերել եւ նոցա բնակիչներին վարել։ Նա բնակեցրեց Նրանց իր տէրութեան ուրիշ գաւառների մէջ, մանաւանդ Ռէշտուտ՝ Գիլանի մէջ եւ Սպահանում։ Սակայն միեւնոյն ժամանակ ի նկատի ունենալով Նրանց Ջանասիրութիւնը, խնայողութիւնն եւ առեւտրական ոգին, նա առաջ վարեց Նրանց Ջանասիրական ձեռնարկութիւնները, որոնց մէջ գործ էր դնում եւ իր սեպհական դրամագլուխը, դէպ ի հնդկական վաճառականութիւնը, դէպ ի բամբակի առեւտուրը, դէպ ի մանուածոյ թելերի եւ մետաքսի վաճառականութիւնը։»

Մեր այս բերած վկայութիւններից կարելի է եզրակացնել, որ 1. Շահաբբաս իբրեւ անհատ՝ վերին աստիճանի բռնակալ, անգութ եւ նախանձոտ մարդ է եղել, ինչպէս արեւելքի բոլոր հռչակաւոր բռնակալները. 2. Իբրեւ թագաւոր եւ վարչական անձն՝ նա խիստ Նրբամիտ քաղաքագէտ, հանճարեղ կառավարիչ, ժողովրդասէր եւ իւր երկրի բարգաւաճման ու հզօրութեան նախանձախնդիր անձն է եղել. 3. Հայերի գաղթականութիւնը՝ կատարուել է բռնի կերպով եւ նրա գլխաւոր դրդիչ պատճառն եղել է Շահաբբասի ցանկութիւնը ծաղկեցնել իր երկիրն ու մասամբ Օսմանցիների արշաւանքն անհնարին դարձնել։

Մեզ հարկաւոր է այժմ իմանալ, թէ գաղթական Հայերին ո՞րտեղ բնակեցրեց Շահաբբասն եւ ո՞րքան էր գաղթեցրած Հայերի թիւը։ Պէտք է նկատենք առաջ, որ ինչպէս ցոյց տուինք մեր պատմութեան ընթացքում եւ ինչ-